ԽԱՉԻԿ ՍԱՄՈՒԵԼՅԱՆ

(Ծննդյան 100-ամյակի առթիվ)

Կ. Վ. ՄԵԼԻՔ-ՓԱՇԱՅԱՆ

Լրացավ հայ ականավոր ազգագրագետ, իրավագետ, պատմաբան, բանասեր, պրոֆեսոր Խաչիկ Ստեփանի Սամուելյանի ծննդյան 100 տարին։ Նա ծնվել է 1873 թ. Ղրիմի Կերչ քաղաքում, քահանայի ընտանիքում։ Միջնակարգ կրթությունն ստացել է Թեոդոսիայի գիմնազիայում։ 1895—1900 թթ. սովորել և ավարտել է Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը, 1901—1903 թթ. ուսանել է Իենայի (Գերմանիա) համալսարանում։ Արտասահմանից վերադառնալուց հետո Խ. Սամուելյանը բնակություն է հաստատում Թիֆլիսում և մինչև 1907 թ. զբաղվում է ժուռնալիստիկայով։ 1904—1905 թթ. եղել է «Кавказское сельское хозяйство» *ամսագրի քարտուղարը։ Այդ շրջանում նա բազմաթիվ հոդվածներով հանդես է գալիս պարբերական մամուլում։*

1907—1909 թթ. Խ. Սամուելյանը վարել է Գևորգյան ճեմարանի ռուսաց լեզվի, իրավագիտության և քաղաքատնտեսության դասախոսի պաշտոնը, ապա երեք տարի շարունակ աշխատել է Նոր Նախիջևանի թեմական դպրոցում որպես ռուսաց լեզվի ուսուցիչ, իսկ 1912 թ. Թիֆլիսի Հովնանյան դպրոցում դասավանդել է ընդհանուր պատմություն։ 1912—1913 թթ. հրավիրվում է Թիֆլիսի առևտրական դպրոցը, ուր վարում է գերմաներեն լեզվի դասընթացը։ 1913—1914 թթ. վերստին անցնում է խմբագրական աշխատանքի՝ որպես քարտուղար աշխատելով «Тифлисский листок»*-ում։ 1914 թ. մեկնում է Շուշի, ուր ստանձնում է տեղի թեմական դպրոցի տեսուչի օգնականի, ապա՝ տեսուչի պաշտոնը, որտեղ պաշտոնավարում է մինչև 1917 թ.։ 1917—1919 թթ. Խ. Սամուելյանը մեկնում է Բաքու և աշխատում քաղաքային հինգերորդ դպրոցում որպես տեսուչ։ 1919—1920 թթ. նշանակվում է Ալեքսանդրապոլի տղաների գիմնազիայի տեսուչ, իսկ 1920—1921 թթ.՝ նույն քաղաքի դպրոցների հրահանգիչ։*

Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո՝ 1921—1922 թթ., Խ. Սամուելյանը ընտրվում է Էջմիածնի գիտական ինստիտուտի կոլեգիայի անդամ, այնուհետև՝ Երևանի հեղափոխական տրիբունալի և ապա՝ հանրապետության գլխավոր դատարանի անդամ։ 1924 թ. մարտին նշանակվում է Պետական կենտրոնական արխիվի վարիչ, ուր պաշտոնավարում է մինչև 1934 թ.[1]*։ Այնուհետև Խ. Սամուելյանը վարչական պաշտոններ չի վարել, այլ զբաղվել է գիտա-մանկավարժական գործունեությամբ՝ Երևանի պետական*

---

[1] *Կենսագրական բնույթի նյութերը վերցված են Խ. Սամուելյանի ինքնակենսագրությունից (Հայկական ՍՍՀ Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության և սոցիալիստական շինարարության կենտրոնական պետական արխիվ, գործ 740)։*

համալսարանում, Նյութական կուլտուրայի ինստիտուտում, Մանկավարժական ինստիտուտում և այլուր։

* * *

Բազմակողմանի և նշանակալից են պրոֆեսոր Խ. Սամուելյանի մատուցած ծառայությունները հայագիտությանը։ Ավելի քան քառասուն տարի նա անխոնջ աշխատեց այդ ասպարեզում։ Նրա գիտական աշխատությունները հայ ազգագրության, իրավագիտության, պատմության բնագավառում իրենց արժանի տեղն են գտել հայագիտության ոսկե ֆոնդում։

Խ. Սամուելյանը գրական-գիտական գործունեությունը սկսել է 1897 թ.։ Նա բազմաթիվ հոդվածներով հանդես է եկել «Մշակ» օրաթերթում, «Տարազ» շաբաթաթերթում, «Արշալույսում», որտեղ վարել է նաև խմբագրության քարտուղարի պաշտոնը, «Սուրհանդակ» օրաթերթում, որի փաստական խմբագիրն է եղել, խմբագրել է նաև Շուշիում լույս տեսնող «Փայլակ» թերթը։ Թիֆլիսում հրատարակել է «Кавказская школа» մանկավարժական ամսագիրը, որը ֆինանսական միջոցների պակասության հետևանքով կարճատև կյանք ունեցավ։ Հայաստանում սովետական կարգերի հաղթանակից հետո Խ. Սամուելյանը բազմաթիվ հոդվածներ է տպագրել «Խորհրդային Հայաստան», «Մաճկալ», «Ավանգարդ», «Հայաստանի աշխատավորուհի», «Նորք», «Մարտակոչ», «Բանվոր» և այլ պարբերականներում։ Նրա առաջին գիտական հոդվածը, որը կրում է «Очерки по обычному семейному праву» լույս է տեսել «Кавказский вестник»-ում 1902 թ.։ Նրանում հեղինակը հանդամանորեն քննության

է առնում ընտանիքի ու ամուսնության ձևերը, հարսանեկան սովորությունները և դրանց հետ կապված շատ այլ հարցեր։

Պրոֆ. Խ. Սամուելյանը հատկապես գործուն մասնակցություն է ունեցել «Ազգագրական հանդեսին», որին աշխատակցել է 1903 թ. մինչև հանդեսի փակումը (1916 թ.), տպագրելով մի շարք արժեքավոր հոդվածներ։ Նա եղել է հայոց ազգագրական ընկերության անդամ և միշտ ընտրվել է «Ազգագրական հանդեսի» խմբագրական մասնաժողովի կազմում։ «Ազգագրական հանդեսում» պարբերաբար հրատարակվում են Խ. Սամուելյանի հոդվածները։ 1903 թ. «Ազգագրական հանդեսի» 10-րդ գրքում լույս է տեսնում նրա «Արյան վրեժ և փրկանք» մեծածավալ հոդվածը, ուր հեղինակը պատմական և իրավաբանական տեսանկյունով քննության է առնում արյան վրեժի և փրկանքի ինստիտուտը, սկսած հնագույն շրջանից մինչև XIX դարի վերջը։ Փաստական հարուստ նյութերով հեղինակը քննարկում է այդ պրոբլեմի աստիճանական զարգացումը, հմտությամբ օգտագործելով ոչ միայն մեր պատմագիրների, դատաստանագրքերի, այլև սովորութական իրավունքի բոլոր տվյալները։ Հայ ազգագրության մեջ Խ. Սամուելյանը առաջինն էր, որ գիտականորեն լուծեց արյան վրեժի և փրկանքի հարցը։ Ա. Ղըլտչյանը այդ հոդվածը իրավացիորեն համարում է հետաքրքրական իր արծարծած խնդիրների տեսակետից[2]։

Հետաքրքրություն է ներկայացնում նրա «Հայոց հին իրավունքը և նրա հետազոտության մեթոդը»[3] հոդվածը, որտեղ հեղինակը կանգ է առնում մեր իրավաբանական գրականության վրա։ Նշելով, որ հայ հին գրականությունը որքան հարուստ է պատմական-աստվածաբանական բնույթի երկերով, նույնչափ աղքատ է իրավաբանական գրվածքներով, նա առաջ է քաշում չափազանց կարևոր մի խնդիր՝ սովորութական իրավունքի նյութերի օգտագործման հարցը, ապա նշում է այն մեթոդները, որոնց միջոցով պետք է ուսումնասիրել հայոց հին իրավունքը (համեմատական-էթնոլոգիական, նախապատմական, պատմա-համեմատական և մնացուկային)։

Հաջորդ հոդվածը, որ լույս տեսավ «Ազգագրական հանդեսում», կրում է «Առևանգմամբ և գնմամբ ամուսնություն»[4] վերնագիրը։ Այստեղ հեղինակը հարուստ փաստական նյութերով հետազոտում է առևանգմամբ և գնմամբ ամուսնությունը, նրա զարգացման շրջանները, ցույց է տալիս, որ առևանգմամբ ամուսնությունն աստիճանաբար վերանում է, իսկ գլխագինը տեղի է տալիս օժիտին։

Ուշագրավ է Խ. Սամուելյանի «Հայ ընտանեկան պաշտամունքը»[5] ուսումնասիրությունը, ուր հեղինակը կանգ է առնում հայ ընտանեկան պաշտամունքի ամենակարևոր մասը կազմող՝ հոգիների պաշտամունքի վրա, այն աղերսելով հատկապես թաղման ծեսերի, ննջեցյալների պաշտամունքի հետ։ Այնուհետև ուսումնասիրողը հանգամանորեն վերլուծում է օջախի պաշտամունքը իր ամբողջ կոմպլեքսով հանդերձ։

---

2 «Ազգագրական հանդես», 1—10 գրքեր, դրախոսական, «Մուրճ» ամսագիր, Թիֆլիս, 1904, էջ 131։

3 «Ազգագրական հանդես», գիրք 11, Թիֆլիս, 1904։

4 Նույն տեղում, գիրք 12, Թիֆլիս, 1904։

5 Նույն տեղում, գիրք 13, Թիֆլիս, 1906։

Խ. Սամուելյանի մեկ այլ հետազոտության մեջ մեծ չափով օգտագործված են ազգագրական նյութերը, թեպետ այն իրավաբանական բնույթ ունի («Հայոց ժառանգական իրավունքը»)[6]։ Այստեղ համակողմանիորեն քննվում է ժառանգական իրավունքը իր զարգացման բոլոր շրջաններով։ Օգտագործելով ասուրա-հռոմեական և մովսիսական օրենքները, Դոշի «Դատաստանագիրքը», ինչպես նաև սովորութական իրավունքի տվյալները, հեղինակը կարողանում է սպառիչ կերպով լուծել ժառանգական կարգերի, ժառանգություն ստացողների աստիճանների հետ կապված հարցերը։

1908 թ. «Արարատ» ամսագրում լույս տեսավ Խ. Սամուելյանի «Իրավունք և կրոն» հոդվածը, որը նվիրված էր իրավունքի և կրոնի կապին։ Հեղինակը ընդգծում է այն հանգամանքը, որ եկեղեցին զգալի գեր է խաղացել իրավաբանական հուշարձանների ստեղծման գործում՝ եկեղեցական ժողովների որոշումներ, դատաստանագրքեր և այլն։ Նույն թվականին «Արարատում» հրատարակվեց Խ. Սամուելյանի «Հայ իրավաբանական սիմբոլները» հոդվածը, ուր առաջին անգամ հայագիտության մեջ քննության են առնվում հայ իրավաբանական սիմբոլները։ Հեղինակը հատկապես կանգ է առնում Բաշլըղի (Ղալան), Հանդեմասու և այլ ծեսերի ու սովորությունների վրա։ Նույն թվականին, դարձյալ «Արարատում», Խ. Սամուելյանը լույս ընծայեց իր ուշագրավ հետազոտությունը «Հայ նահապետական գերդաստան» խորագրով։ Առաջին անգամ հայ ազգագրության մեջ գիտական շարադրանքով նա ներկայացնում է գերդաստանը իր զարգացման փուլերով։ Պատմա-իրավաբանական բնույթ ունի Խ. Սամուելյանի «Եկեղեցական-պետական հարաբերությունները Հին Հայաստանում» հոդվածը, որը լույս տեսավ 1910 թ. Թիֆլիսում հրատարակվող «Արորում»։

XIX դարում արտասահմանյան և ռուսական ազգագրության մեջ հանդես եկան մի շարք խոշոր գիտնականներ՝ Ի. Բախհոֆենը, Լ. Մորգանը, Մ. Կովալևսկին և ուրիշներ, որոնք առաջ քաշեցին մայրիշխանության գոյության հարցը։ Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը որոշ քննադատությամբ ընդունեցին մայրական տոհմի առկայությունը։ Այդ առումով առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Խ. Սամուելյանի «Մայրական իրավունք»[7] ուսումնասիրությունը։ Հայ ազգագրության պատմության մեջ Խ. Սամուելյանն առաջինն էր, որ առաջ քաշեց մայրիշխանության կամ ավելի ճիշտ՝ մայրական տոհմի հարցը։ Նրան հաջողվեց բավական ամփոփ կերպով գաղափար տալ հայերի մեջ վերապրուկային ձևով պահպանվող մայրիշխանության մասին։ Այդ ուսումնասիրությունը հետագայում արժանացավ սովետական ականավոր ազգագրագետ Մ. Օ. Կոսվենի դրվատական խոսքին[8]։

1911 թ. Թիֆլիսում Խ. Սամուելյանն առանձին գրքով հրատարակում է «Ազգագրական հանդեսում» լույս տեսած «Հայ սովորութական իրավունքը», «Հայոց հին իրավունքը և նրա հետազոտման մեթոդը», «Առևանգմամբ և գնմամբ ամուսնություն» հոդվածները, որոնք նա վերամշակել էր, հարստացրել նոր փաստերով և գրեթե հիմնովին վերափոխել։

---

6 Նույն տեղում, գիրք 15, 16, Թիֆլիս, 1907։

7 Նույն տեղում, գիրք 19, Թիֆլիս, 1910։

8 Տե՛ս М. О. Косвен, Матриархат, М., 1948, էջ 292—293։

Խ. Սամուելյանը 1912 թ. նորից անդրադառնում է սիմբոլին՝ «Սիմբոլը հայ սովորույթներում»[9] հոդվածում քննության առնելով սիմբոլական գործողությունները, որոնցով բնորոշվում են սովորութական իրավունքի զանազան կողմերը։ Վերլուծումը կատարվում է հայկական նյութերի հիման վրա, օգտագործելով նաև համեմատական տվյալները (հատկապես զարգացման ցածր աստիճանի վրա գտնվող ժողովուրդների սովորույթներից)։

1911 թ. Խ. Սամուելյանը Վիեննայում հրատարակում է Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» վերաբերյալ մի հմտալից ուսումնասիրություն[10]։ Վ. Բաստամյանից հետո սա առաջին լուրջ փորձն էր հանգամանորեն քննության առնելու Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը» և հայոց քաղաքացիական իրավունքի հարցերը։ Միաժամանակ բացահայտելով «Դատաստանագրքի» ստեղծման շարժառիթները և նրա աղբյուրները, նա համակողմանիորեն քննում է դատակազմության, դատավարության հարցերը, կանգ առնում ծնողական և ընչական իրավունքի վրա։ Լինելով իրավաբան, ազգագրագետ, պատմաբան, նա մեծ հմտությամբ տալիս է կոմպլեքս ուսումնասիրության մի գեղեցիկ օրինակ։

Պրոֆ. Խ. Սամուելյանի լավագույն ուսումնասիրություններից է «Տոտեմիզմը հայոց մեջ»[11] հոդվածը, որը առաջին ուսումնասիրությունն է հայերի մեջ գոյություն ունեցող տոտեմիզմի վերապրուկների մասին։ Հոդվածում հանգամանորեն տրվում է կենդանիների, թռչունների, սողունների (հատկապես եզան, օձի, անգղի, այծի, գայլի, խոյի) պաշտամունքը։ Ինքնատիպ աշխատություն է Խ. Սամուելյանի «Քարի պաշտամունքը հայոց մեջ» հոդվածը, որ լույս տեսավ Վիեննայում 1927 թ., «Հանդես ամսօրյայում»։ Այս հոդվածում նա ցույց է տալիս, որ քարապաշտությունն իր էությամբ հոգեպաշտություն է, աշխարհայացք և ոչ թե կրոն։ Հեղինակը հնագիտական, ազգագրական, մատենագրական հարուստ նյութերով ապացուցում է, որ քարապաշտությունը հայերի մեջ գոյություն է ունեցել վաղագույն ժամանակներից և հարատևել է մինչև XIX դարի վերջը։

Խ. Սամուելյանի աշխատությունների մեջ բացառիկ տեղ է գրավում նրա «Հին Հայաստանի կուլտուրան» եռահատոր մենագրությունը, որի վրա հեղինակը աշխատել է շուրջ 40 տարի։ Այնտեղ ամփոփված է նրա հրատարակված և ձեռագիր աշխատությունների զգալի մասը։ Այդ հատորներում հեղինակը գիտական շարադրանքով ներկայացնում է հայ նյութական և հոգևոր մշակույթի ամբողջ պատկերը։ Աշխատության առաջին հատորը լույս տեսավ 1931 թ.։ Առաջաբանում նա գրում է. «Մեր կողմից թերևս պատասխանատու գործ է ձեռնամուխ լինել մի այնպիսի պատասխանատու աշխատանքի, որի համար տակավին բացակայում են մեր գիտական գրականության մեջ բավարար չափով նյութեր և որի հաջողության համար ամենալավ դեպքում, թերևս, անհրաժեշտ է մասնագետների կոլեկտիվ գործակցություն։ Սակայն սպա-

9 «Ազգագրական հանդես», գիրք 22, Թիֆլիս, 1912, գիրք 23, Թիֆլիս, 1912։

10 «Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը» ու հայոց քաղաքացիական իրավունքը», Վիեննա, 1911։

11 «Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի», գիրք Ա և Բ, Վաղարշապատ, 1921—1922, էջ 15—34։

ասել, որ Հայաստանի կուլտուրայի պատմության վերաբերյալ հիմնական հարցերը, առանձին մասնագիտական ուսումնասիրությունների նյութ դառնալով, վերջնականորեն լուծվեն, սպասել, որ հատուկ մենագրական աշխատություններով նախապատրաստվեն այդպիսի դիտական գործի տանող ուղիները և ապա միայն ձեռնարկել Հայաստանի կուլտուրայի պատմությանը—կնշանակեր՝ ունեցած հնարավորություններով արդեն կատարած գործը հետաձգել անորոշ ժամանակով...»[12]։

Խ. Սամուելյանը ժամանակի գիտության մակարդակին համապատասխան հաջողությամբ է լուծում իր առջև դրված խնդիրները։ Մենագրությունը կազմված է, ինչպես հեղինակն է անվանում, չորս հատվածներից։ Առաջին հատվածում, որ կրում է «Ներածական» խորագիրը, նա կանգ է առնում այն մեթոդների վրա, որոնցով պետք է ներկայացվի աշխատությունը։ Դրանք են. հնագիտության մեջ՝ ստատիգրաֆիկ, տիպոլոգիկ, ազգագրության մեջ՝ պատմա-համեմատական և մնացուկների։ Ընդարձակ շարադրմամբ ներկայացվում են աղբյուրները՝ հնագիտություն, ազգագրություն, մարդաբանություն, պատմություն, բանահյուսություն, լեզվաբանություն։ Ամփոփելով, Խ. Սամուելյանը գրում է. «Այսպես, ուրեմն, հնագիտությունը տալիս է մեր նախնական կուլտուրայի սոսկ կմախքը, իսկ ազգաբանությունը ազգագրության ու ֆոլկլորի իր ճյուղերով, նաև մարդաբանության ու լեզվագիտության օժանդակությամբ, գալիս է համակելու այդ կմախքը մսով ու մկանունքներով, բայց այստեղ հանդես է գալիս պատմական գիտությունը, օժտված մատերիալիստական-մարքսիստական մեթոդաբանությամբ, որը շունչ և հոգի է ներարկում, ջերմ արյուն է հոսեցնում մկանունքով համակված այդ կմախքի մեջ»[13]։

Այդ մասում Խ. Սամուելյանը թույլ է տալիս մի քանի մեկնաբանություններ, որոնք այժմ ընդունելի չեն, թեպետ իր ժամանակին համարվում էին գիտության առաջավոր խոսք։ Այսպես, նա գրում է. «Նախնական կամ հնադարյան կուլտուրան ուսումնասիրող գիտությունը անվանում ենք նախապատմություն, իր ժամանակաշրջանն էլ՝ նախապատմական»[14], մինչդեռ խոսքը վերաբերում է նախնադարյան-համայնական հասարակության դարաշրջանի պատմությանը։ Խ. Սամուելյանը հետևելով XIX դարի եվրոպական գիտնականներին, ընդունում է ազգագրական երկու գիտական դիսցիպլինների առկայությունը՝ ազգաբանություն և ազգագրություն, մինչդեռ դա մի գիտություն է՝ ազգագրություն (ի դեպ նկատենք, որ մինչև այժմ էլ Եվրոպայում և Ամերիկայում ընդունում են ազգագրության այդ արհեստական բաժանումը երկու մասի)։ Ճիշտ չէ Սամուելյանը, երբ ազգագրությունը չի դիտում որպես գիտություն, այլ համարում է գիտական դիսցիպլին։ Այդ բաժնի երկրորդ մասում հեղինակը հանգամանորեն նկարագրում է Հայաստանի բնաշխարհը՝ լեռները, գետերը, լճերը, կլիման ու բուսականությունը (որոշ տուրք տալով այսպես կոչված «աշխարհագրական դետերմինիզմին»)։ Երրորդ մասը նվիրված է էթնիկ-կուլտուրական շերտերին. այստեղ հեղինակը, հմտորեն օգտագործելով ժամանակի ամբողջ գրականությունը, հանգամանորեն նկարագրում է

12 Խ. Սամուելյան, Հին Հայաստանի կուլտուրան, հատ. 1, Երևան, 1931, էջ 3։
13 Նույն տեղում, էջ 21։
14 Նույն տեղում, էջ 9։

նախահայկական ժողովուրդների (խեթերի, ուրարտացիների) պատմությունն ու մշակույթը, ընդգծում նրանց դերը հայ ժողովրդի կազմավորման գործում, շարադրում հայերի ձևավորման մասին եղած բոլոր կարծիքները, միաժամանակ անելով իր արժեքավոր դիտողությունները այդ հարցերի մասին։

Երկրորդ հատվածը վերնագրված է «Նյութական կուլտուրա» և կազմված է երկու բաժնից՝ պալեոլիթ և նեոլիթ։ Օգտագործելով հնագիտական ու ազգագրական նյութերը, հեղինակն ամփոփ կերպով ներկայացնում է այդ շրջանները, թեև այդ ժամանակ դեռևս բավարար նյութեր չկային պնդելու, որ Հայաստանն ունեցել է պալեոլիթ։ Այդուհանդերձ Խ. Սամուելյանը վստահորեն գրում է. «Եթե կատարվեն սիստեմատիկ հնագիտական հետախուզումներ և լայն թափով գիտականորեն ձեռնարկված պեղումներ, ամենայն հավանականությամբ երևան կգան արժեքավոր և գիտական նշանակություն ունեցող պալեոլիթյան հուշարձաններ, որոնք մինչև այժմ կորած են երկրի անհայտ խորքերում»[15]։ Եվ իրոք, հնագիտական հարուստ նյութերով արդեն ապացուցված է, որ Հայաստանն անցել է պալեոլիթի շրջան։ Ավելի հանգամանորեն Խ. Սամուելյանը նկարագրում է նեոլիթը, տալով նրա զարգացման փուլերը։

Երրորդ հատվածը կրում է «Սոցիալական կուլտուրա» խորագիրը և կազմված է երկու բաժնից՝ տոտեմիզմ և մատրիարխատ։ Այստեղ հեղինակը բազմակողմանիորեն քննության է առնում տոտեմիզմի և մայրիշխանության հետ կապված բազմաթիվ հարցեր և տալիս նրանց անհրաժեշտ լուծումը։

Չորրորդ հատվածը նվիրված է հոգևոր կուլտուրային, որտեղ հեղինակը բացահայտում է անիմիզմի, նախաանիմիզմի, մոգության, ջրի, կրակի, քարի պաշտամունքը։ Այստեղ նույնպես, տուրք տալով ժամանակի ընդունված սխալ կարծիքներին, նա ընդունում է նախաանիմիզմի գոյությունը և այսպես կոչված նախալոգիկական մտածողությունը, որոնք այժմ մերժված են։

«Հին Հայաստանի կուլտուրան» մենագրության երկրորդ հատորը լույս տեսավ առաջին հատորից տաս տարի անց՝ 1941 թ., հեղինակի մահից հետո։ Հատորն ամբողջովին վերաբերում է բրոնզի և վաղագույն երկաթի դարի մշակույթին, նրանում հանգամանորեն քննության են առնվում մետաղի ինդուստրիան, դամբանները, գործիքները, զարդարանքները, մետաղե պարագաները, կավագործությունը, արվեստը, բնակատեղին, ամրոցները, տնտեսական զբաղմունքները։ Այդ բոլորը հեղինակը կատարում է նյութական մշակույթի ուսումնասիրության ժամանակի մակարդակին համապատասխան։ Դեպ, նշենք, որ երկրորդ հատորը շարադրվել է երեսնական թվականներին, երբ Հայաստանում սիստեմատիկ հնագիտական պեղումներ չէին կատարվում, չէին սկսված Դվինի, Կարմիր-բլուրի, Արին-բերդի, Լճաշենի, Շենգավիթի, Գառնիի, Մեծամորի հնագիտական պեղումները։ Բայց չնայած հնագիտական նյութերի պակասությանը, Խ. Սամուելյանին հաջողվել է տալ մեր նյութական մշակույթի այդ շրջանի պատմությունը, կատարել ուշագրավ ընդհանրացումներ և դիտողություններ, որոնք այժմ էլ չեն կորցրել իրենց թարմությունը։

«Հին Հայաստանի կուլտուրան» աշխատության երրորդ հատորը վերաբերում է նույն ժամանակաշրջանի սոցիալական մշակույթին։ Օգտագործելով երկար տարիների հետազոտական աշխատանքի արդյունքները, հեղինակը

---

15 Նույն տեղում, էջ 107։

կարողանում է ամփոփ շարադրանքով ներկայացնել սոցիալական մշակույթի պատկերը։ Գրքի առաջին մասը կրում է «Նախնադարյան համայնական հասարակություն» խորագիրը և նվիրված է տոհմի ու ցեղի ծագման հարցերին և նախնադարյան-համայնական հասարակության բնորոշմանը Հայաստանում։ Այստեղ խոսվում է համայնական աշխատանքի բաժանման, ծիսական սովորությունների, ամուսնության ձևերի, արյան վրեժի, տոհմա-ցեղային կազմի նահապետական գերդաստանի, գյուղական համայնքի, ստրկության, տոհմից դեպի ֆեոդալիզմ անցման հարցերի մասին։ Երկրորդ մասը ամբողջովին նվիրված է ֆեոդալական հասարակության քննությանը։

Մեծ է եղել Խ. Սամուելյանի դերը հայ իրավագիտության պատմության ուսումնասիրության բնագավառում։ Այդ ասպարեզում նրա գլուխ-գործոցը 1939 թ. հրատարակված «Հայ հին իրավունքի պատմությունն» է։ Հիշյալ աշխատությունը, որի երկրորդ հատորը հեղինակի մահվան պատճառով չավարտվեց, հմտալից մի ուսումնասիրություն է և հանդիսանում է հեղինակի երկար տարիների ստեղծագործական աշխատանքի արգասիքը։ Մինչ այս աշխատության երևան գալը Խ. Սամուելյանը մենագրությունների և հոդվածների ձևով հրատարակել էր մի շարք գործեր, որոնք հող պատրաստեցին այդ ընդհանրացնող աշխատության համար։ Աշխատությունը կազմված է երեք մասից։ Առաջին մասում հեղինակը նշում է հայ իրավունքի պատմության ուսումնասիրության նշանակությունը և նկարագրում նրա հետազոտության վիճակը։ Երկրորդ մասը նվիրված է իրավունքի աղբյուրների ուսումնասիրությանը՝ սովորույթ, կանոնական որոշումներ, այլալեզու աղբյուրներ, հայկական դատաստանագրքեր, հայ պատմագիրների գործերում և վիմական արձանագրություններում տեղ գտած իրավունքի վերաբերյալ նյութեր։ Երրորդ մասում բնորոշվում են հայ իրավունքի զարգացման շրջանները։ Այս բոլոր հարցերը հեղինակը քննում է մեծ հմտությամբ, օգտագործելով մատենագրական, ազգագրական նյութեր և իրավաբանական հուշարձաններ։ Այժմ Խ. Սամուելյանի որոշ տեսակետները (օրինակ՝ ֆեոդալիզմի զարգացման շրջանների, ստրկատիրական ֆորմացիայի վերաբերյալ) չեն ընդունվում, բայց դա չի նսեմացնում նրա աշխատության արժեքը. այն եզակի բնույթի ուսումնասիրություն է, և շատ տեսակետներից մինչև այժմ մնում է չգերազանցված։

Մեծ է Խ. Սամուելյանի վաստակը հայ ժողովրդի պատմության ուսումնասիրության բնագավառում։ 1937 թ. ՀՍԽՀ պատմության և գրականության ինստիտուտի «Տեղեկագրի» երկրորդ գրքում լույս է տեսնում նրա «Ստրկությունը հին Հայաստանում» մեծածավալ հոդվածը, որը մեծ հետաքրքրություն է առաջացնում գիտնականների շրջանում. այդ հարցի շուրջ կազմակերպվում է բանավեճ, որը շարունակվում է գրեթե մինչև օրս։ Խ. Սամուելյանը գործուն մասնակցություն է ունեցել հայ ժողովրդի պատմության դասագրքի կազմմանը, նա է գրել մեր անցյալի ամենադժվարին շրջանի պատմությունը՝ նախնադարյան հասարակությունից մինչև Արշակունիների թագավորության անկումը։

Պրոֆ. Խ. Սամուելյանը դասախոսում էր «Հին Արևելքի պատմություն» Երևանի պետական համալսարանում և հայկական մանկավարժական ինստիտուտում։ Ուսանողությանը օգնելու նպատակով 1938—1939 թթ. մանկավարժական ինստիտուտի հրատարակությամբ նա լույս է ընծայում «Նախնադարյան հասարակության պատմություն», «Հին Արևելքի պատմություն»,

«Խալդական հասարակությունը» գրքույկները։ Բացի այդ, նրա արխիվում պահպանվել են «Անտիկ հասարակության պատմություն», «Ուսումնասիրություն Վրաստանի պատմության վերաբերյալ», «Ռուսաստանի պատմություն» և այլ աշխատությունների ձեռագրերը։

Մեծ է Խ. Սամուելյանի դերը հակակրոնական գրականություն ստեղծելու գործում. իր մի քանի տասնյակ գրքույկներով և հոդվածներով նա հիմք դրեց մեզանում գիտա-աթեիստական գրականությանը։

Իր գործունեության վաղ շրջանում Խ. Սամուելյանը գրել է նաև գրականագիտական բնույթի հոդվածներ։ Այսպես, 1900 թ. «Տարազ» շաբաթաթերթում լույս է տեսել «Գրական ուրվագծեր» խորագրով նրա հոդվածաշարը, ուր բնութագրվում է XIX դարի II կեսի ռուս գրականությունը, վերլուծվում Վ. Գաբշինի, Ն. Գոգոլի, Մ. Գորկու գործունեությունը։ Ա. Չեխովի ծննդյան 50-ամյակի առիթով Խ. Սամուելյանը «Լույս» շաբաթաթերթում գրում է «Անտոն Չեխով» վերնագրով հոդվածը, որտեղ նա Չեխովին դասում է ռուս մեծ գրողների՝ Լ. Տոլստոյի և Ի. Տուրգենևի շարքին։ «Ա. Չեխովը մի հայելի է, որը զարմանալի նրբությամբ արտացոլում է իր մեջ 80-ական թվականների ռուս հասարակական կյանքի ամբողջ պատկերը։ Նա մի աշգրիտ, բայց և միևնույն ժամանակ վերին աստիճանի գեղարվեստորեն զարգացած պատմագիր է, որի փորձված հայացքից չեն վրիպում յուր դարաշրջանի ելևէջները»[16]։

Խ. Սամուելյանը զբաղվել է նաև ժողովրդական բանահյուսության ուսումնասիրությամբ։ 1908 թ. Թիֆլիսում հրատարակվող «Գեղարվեստ» ամսագրում լույս է տեսնում նրա «Աշխատանքը հայ ժողովրդական երգերում» հոդվածը, որի շարունակությունը հրատարակվում է շատ ուշ, մոտ քսան տարի հետո՝ 1927 թ. Թիֆլիսի «Մարտակոչ» օրաթերթի 39—41 համարներում։ Առաջին հոդվածում հեղինակը փորձ է արել վերլուծելու հայ ժողովրդական աշխատանքային երգերի ռիթմը, իսկ երկրորդում կանգ է առել երգերի սոցիալական բնույթի վրա։ Ուշագրավ է Խ. Սամուելյանի «Ֆոլկլորի միջազգային դաշնակցությունը»[17] թղթակցությունը, որը նվիրված է ֆոլկլորի միջազգային ընկերության ստեղծման խնդրին և առաջ է քաշում բանահյուսական նյութերի հավաքման նպատակով Հայոց ազգագրական ընկերության առանձին բաժին ստեղծելու հարցը։

1941 թ. Արմֆանի հրատարակությամբ լույս տեսավ «Քյոռ-օղլի» ժողովրդական վիպասանությունը, որի առաջաբանը (հայերեն և ռուսերեն) գրել է Խ. Սամուելյանը։ Դա հակիրճ, բայց հմտալից ուսումնասիրություն է Քյոռ-օղլի ժողովրդական վեպի մասին։ Խ. Սամուելյանը զբաղվել է նաև թարգմանություններով՝ ռուսերենից հայերեն։ Նա թարգմանել է «Բույսերի կյանքը», «Մայրական սերը», Ա. Գումպլովիչի «Հասարակական թեորիաները» և այլ գործեր։

Խ. Սամուելյանը ջերմորեն է արձագանքել հասարակության հուզող հարցերին։ Այսպես, 1906 թ. «Աշխատանք» շաբաթաթերթում նա տպագրել է «Հայ գյուղացին և հայ մամուլը»[18] հոդվածը, ուր առաջ է քաշվում գյուղա-

---

16 «Լույս» շաբաթաթերթ, Նոր-Նախիջևան, 1910, № 4, էջ 3։
17 «Ազգագրական հանդես», գիրք 21, Թիֆլիս, 1912։
18 «Աշխատանք» շաբաթաթերթ, Թիֆլիս, 1906, № 1։

ցիության մեջ կազմակերպված աշխատանք տանելու հարցը։ Դարձյալ գյուղացիությանն է նվիրված նրա «Հայ գյուղական պրոլետարիատը»[19] հոդվածը, որտեղ հեղինակը նշում է, որ գյուղացիությունը միատարր չէ, այլ արդեն բաժանված է երկու հակամարտ դասակարգերի՝ գյուղական բուրժուազիա և գյուղական պրոլետարիատ։ Գյուղացիությանը, գրում է նա, մտահոգում է երկու հարց՝ սակավահողությունը և հասարակական-իրավական դրությունը։ Խ. Սամուելյանը քննադատում է ցարիզմի ռուսականացման քաղաքականությունը, նա նշում է, որ Կովկասում հողերի 40 տոկոսը գտնվում է պետության ձեռքին, որ այդ հողերը տրվում են ռուսներին՝ ցանկանալով այդպիսով ցարիզմի համար տնտեսական բազա ստեղծել Կովկասում, մինչդեռ հայ, վրացի, ադրբեջանցի գյուղացիները հողի սակավության պատճառով ստիպված են լինում թողնել գյուղը, փոխադրվել քաղաք, կամ ստրկական պայմաններով հողը վարձակալությամբ վերցնել կալվածատերերից։ Խ. Սամուելյանի մեկ այլ հոդվածը կրում է «Գյուղացիական հողային բանկը»[20] վերնագիրը։ Այստեղ խոսելով Թիֆլիսում բացված պետական բանկի մասին, հեղինակը նշում է, որ նման բանկեր վաղուց գոյություն ունեն Ռուսաստանում, բայց իրենց չեն արդարացրել, քանի որ ոչնչով չէին տարբերվում սովորական բանկերից և վարկ էին տալիս միայն վարկընդունակ գյուղացիներին, այդպիսով զրկելով չքավորներին վարկ ստանալու հնարավորությունից, մինչդեռ հողերի գները շատ բարձր էին։ «Օրենքը և իրավունքը մեզանում»[21] հոդվածում Խ. Սամուելյանը նշում է, որ ցարական օրենքները, որ կազմվում են դիվանատներում, հաշվի չեն առնում հասարակական կարծիքը, ժողովրդի շահերը։ Խոսելով 1905 թ. հոկտեմբերի 17-ի մանիֆեստի մասին, ըստ որի օրենսդրական իրավունքը իբր անցնում է ժողովրդին, Խ. Սամուելյանը գրում է. «Մոտիկ ապագան ցույց կտա, թե ով է հաղթող դուրս գալու, ժողովո՞ւրդը, թե՞ բյուրոկրատիան»։

Իր ակտիվ հասարակական գործունեության համար Խ. Սամուելյանը երկու անգամ բանտարկվել է՝ 1900 թ., Պետերբուրգում ուսանողական շարժումներին մասնակցելու և 1906 թ., սոցիալ-դեմոկրատական կուսակցությանը պատկանելու համար։

Խոշոր է Խ. Սամուելյանի վաստակը Հայաստանում արխիվային գործը կազմակերպելու հարցում։ ՀՍԽՀ Կենտգործկոմի 1924 թ. մարտի 15-ի դեկրետով ստեղծված Հայաստանի պետական արխիվի առաջին վարիչն է նշանակվում Խ. Սամուելյանը։ Նրա եռանդուն ջանքերի շնորհիվ կազմակերպվում է արխիվային շինարարությունը Հայաստանում, արագությամբ ավելանում են արխիվային ֆոնդերը, գիտական դասակարգում է մտցվում այդ աշխատանքներում, համագործակցություն է սկսվում վրացական, ադրբեջանական և միութենական արխիվների հետ։ Մի շարք արխիվային գործեր Վրաստանից ու Ադրբեջանից փոխադրվում են Հայաստան։ Արխիվային գործը մասսայականացնելու նպատակով 1926 թ. «Խորհրդային Հայաստանում» լույս է տեսնում Խ. Սամուելյանի «Հայաստանի պետական կենտրոնական դիվանը և նրա նպատակները» խորագրով հոդվածը, ուր նա գրում է կատարված աշխատանքների և արխիվի խնդիրների մասին։ Հայկական ՍՍՀ Հոկտեմբերյան հեղափո-

19 Նույն տեղում, № 5, 6։
20 Նույն տեղում, № 9։
21 Նույն տեղում, № 17.

խության և սոցիալիստական շինարարության պետական կենտրոնական արխիվի № 228 գործում պահպանվել են Խ. Սամուելյանի բազմաթիվ զեկուցումները արխիվի մասին, նրա ծրագրերը արխիվային գործը Հայաստանում ընդարձակելու վերաբերյալ։ Արխիվային կադրեր պատրաստելու նպատակով Խ. Սամուելյանը լուսավորության կոմիսարիատին գրած 1930 թ. հունիսի 25-ի զեկուցագրում առաջարկում է Համալսարանում մտցնել «Արխիվաշինարարություն» առարկան և ներկայացնում է դրա ծրագիրը։ Խ. Սամուելյանի բեղմնավոր գործունեությունը արխիվում տևում է ավելի քան 10 տարի։ Ամենայն վստահությամբ կարելի է ասել, որ Խ. Սամուելյանը հանդիսանում է արխիվային գործի կազմակերպիչը և հիմնադիրը Սովետական Հայաստանում։

Զգալի աշխատանքներ է կատարել Խ. Սամուելյանը բիբլիոգրաֆիաներ կազմելու ուղղությամբ։ Դեռևս նախահեղափոխական շրջանում նա Ե. Լալայանի հետ միասին կազմում էր աղգագրական բիբլիոգրաֆիա, որ, ցավոք, անավարտ մնաց (ձեռագիրը պահվում է Հայաստանի պատմության թանգարանում)։ 1941 թ. լույս տեսավ Հ. Պետրոսյանի հետ համատեղ կազմված Խ. Սամուելյանի «Հայ հին և միջնադարյան գրականության համառոտ բիբլիոգրաֆիան»։

Մեծ է պրոֆ. Սամուելյանի վաստակը գիտական կադրերի պատրաստման գործում։ Նա երկար տարիներ դասախոսել է Երևանի պետական համալսարանում և Մանկավարժական ինստիտուտում. այժմ մեր հանրապետությունում աշխատող պատմաբանների, մանկավարժների, իրավաբանների, գիտական աշխատողների զգալի մասը աշակերտել է նրան։

Տարիների լարված աշխատանքը քայքայել էր Խ. Սամուելյանի առողջությունը, նա տառապում էր սրտանոթային հիվանդություններով և հանկարծամահ եղավ 1940 թ. հոկտեմբերի 16-ին։

ХАЧИК САМУЭЛЯН

(К 100-летию со дня рождения)

К. В. МЕЛИК-ПАШАЯН

(Резюме)

В статье характеризуется деятельность видного армянского этнографа, правоведа, историка, филолога проф. Хачика Степановича Самуэляна. Его труды сыграли значительную роль в развитии армянской этнографии, правоведения и истории. Они и по сей день сохраняют свое значение. Х. Самуэлян был одним из основоположников этнографической науки в Армении, целый ряд кардинальных проблем этнографии армян впервые был разработан им. К их числу относятся проблемы матриархата, тотемизма, большесемейной общины, обычного права.

Наряду с плодотворной научно-исследовательской деятельностью проф. Самуэлян вел и большую научно-организаторскую, педагогическую и публицистическую работу. Он был основателем Государственного архива Армении, организатором архивного строительства в республике.